Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Հայոց երգեր
գրեց Ն. Տ-ն 1905թ.

84
-66

~~583~~ 5/12 38
경-17/578

Հրատարակութիւն Անդէրսօնի

ԵՂԲԱՅՐԸ ԵՂԲՕՐ ԴԷՄ

(ՎԻԿՏՕՐ ՀԻՒԳՕԻՑ)

Երկրորդ հրատարակութիւն

ԹԻՖԼԻՍ
Էլեմտրաճարժ տպարան «ՀԵՐՄԷՍ» բնկեր., Մաղաքիան փողոց 15; 93
1905

84
Հ-66
սր.

01 JAN 2009
19 NOV 2010

Հրատարակութիւն Անդէրսօնի

ԵՂԲԱՅՐԸ ԵՂԲՕՐ ԴԷՄ

945

(ՎԻԿՏՕՐ ՀԻՒԳՕԻՑ)

5015

Երկրորդ հրատարակութիւն

Գրքոյս սուղութիւնը
հեղինակի թոռնուհին
հաստատեց գրաքննութեան
միջոցին։
0.50 4 2 4 6

ԹԻՖԼԻՍ
Էլեկտրատիպ տպարան «ՀԵՐՄԷՍ» ընկեր., Մեծապատիւ փողոց 15, 93
1905

Լ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.Հ. Պետական Библиотека
7/XI-1922
ԱՆՎԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ

2013

6328

Дозволено цензурою 1 Апрѣля 1905 г. Тифлисъ.

I

ՄՈՌԱՑԿԱՆ

Ֆրանսիայում ներքին պատերազմ կար։ Վանդէ նահանգի բնակիչները փոփոխութիւններ չէին կամենում։ Պարիզեցիները նրանց ապստամբներ անուանեցին և նրանց դէմ զօրք ուղարկեցին։ Վանդէացիները սաստիկ կերպով դիմադրեցին զօրքին։

Նրանք չունէին կանոնաւոր զօրք, այդ պատճառով թշնամու դէմ դուրս բերեցին փոքրիկ խմբեր միայն, որոնք կռւում էին ցրված ոյժերով։ Այսօր մի տեղ յաղթված՝ նրանք վաղը հաւաքվում էին մի ուրիշ տեղ, աւելի լաւ հմտարելով մեռնել, քան թէ հնազանդվել, որովհետև արդարութիւնը իրանց կողմն էին համարում։ Կռիւը բորբոքվում, աւելի կատաղի էր դառնում։ Պարիզեցիները կամենում էին, որքան կարելի է շուտ վախեցնել և այդպիսով վերջ տալ պատերազմին, բայց որքան շատ էին անգթութիւններ գործ դնում,

այնքան աւելի սաստիկ կերպով էին վանդէացիները վրէժխնդիր լինում ամեն մի անզգուշութեան համար։

Երբեմն անդորը, խաղաղ երկիրը արեան դաշտ էր ներկայացնում։ Եւ այդ սարսափելի դրութիւնը երկար շարունակվեց։ Հազարաւոր հանրապետականներ, կամ ինչպէս ժողովուրդն էր անուանում պարիզեցիներին՝ «կապոյտներ», չէին կարողանում յաղթել իրանց թշնամի միապետականներին, կամ ուրիշ խօսքով «սպիտակներին», թէև «սպիտակները» համեմատելով շատ քիչ էին։ Նրանց անվեհեր և քաջ առաջնորդներին բռնելու համար՝ «կապոյտները» մեծ պարգևներ էին խոստանում։ Դրա համար պատերին և ճանապարհների մօտ տնկած սիւներին բազմաթիւ յայտարարութիւններ էին կպցրած։

Մի անգամ, երեկոյեան, այդպիսի յայտարարութիւններից մէկի առաջ կանգնեց մի անցորդ, բարձրահասակ, վայելչակազմ ծերունի՝ գիւղացու հագուստով։ Արդէն սթնած էր. նա դժուարութեամբ կարդաց յայտարարութիւնը։ Այնտեղ գրված էր, որ վաթսուն հազար լիվր՝ ոսկով՝ պարգև կը տրվի նրան, ով որ կը բռնի տեղական ապստամբների գլխաւոր՝ մարկիզ Լանտենակին, և կը յանձնի «կապոյտների» բանակին։ Յայտարարութեան տակը կար մի ինչ որ ստորագրութիւն, բայց անցորդը չկարողացաւ կարդալ, թողեց և հեռացաւ։ Լուսինը դուրս եկաւ։ Անցորդը՝ հասնելով մինչև ճանապարհի այն տեղը, ուր նա բաժանվում էր մի քանի ճիւղերի, կանգ առաւ

և սկսեց մտածել։ Նա ինչպէս երևում էր, չը գիտէր ո՞ր կողմը թեքվի։

—Դէպի ո՞ւր, հարցրեց մի ձայն։

Անցորդը յետ նայեց։

Ճանապարհի վրա բուսած թփերի ետևից դուրս եկաւ ալեխուռն մազերով, ցնցոտիներ հագած, բարձրահասակ և մէջքը կռացած մի ծեր մարդ։ Յենվելով փայտի վրա՝ նա կանգ առաւ և կրկնեց.

—Դէպի ո՞ւր։

—Քեզ ի՞նչ, պատասխանեց անցորդը։

—Աւելի լաւ է ասես։

—Ո՞վ ես դու։

—Ես մուրացկան եմ, իսկ դու՝ մարկիզ Լանտենակը։

Անցորդը ծաղրելով վրա բերեց.

—Դու ինձ հետամուտ ես եղել, որ մատնես... Քո բախտը...

Պատասխանի փոխարէն ծերունին հարցրեց.

—Դու այն գիւղն էիր գնում։

—Այո։

—«Կապոյտները» այնտեղ են։

—Շատ ժամանակ է։

—Այսօր երեք օր է։ Ասում են, որ վաղը պիտի հեռանան։

—Շատ ե՞ն։

—Այնտեղ միայն կէս վաշտ է. իսկ գունդը հեռու է։

—Գունդի հրամանատարը ո՞վ է։

—Հրամանատարը Սիմուրդէնն է։

—Իսկ ժողովուրդը ընդունեց նրանց։

—Ի՞նչպէս չընդունէր։

—Բոլորովին չը կուեցին։

—Բոլորովին։

—Ի՞նչ մարդիկ են... ասաց մարկիզը։ Մի քիչ լռելուց յետոյ՝ նա աւելացրեց.

—Գիւղումը ժողովրդին ծանուցում եղել է։

—Եղել է։

—Ինչի համար։

—Որ քեզ բռնեն։ Յայտարարութիւնը տեսար։

—Տեսայ։

—Ա՛յ, քեզ փնտրում են։ Գնանք, ես քեզ կը թաքցնեմ։

—Ո՞րտեղ։

—Ինձ մօտ։ Ես մի տնակ ունեմ։ Ներքնատան նման մի բան է։

Մարկիզը հարցրեց.

—Ուրեմն դու մեր՝ «սպիտակների» կողմն ես։

—Ես ոչ ոքի կողմը չեմ։ Ես մուրացկան եմ։

—Այնուամենայնիւ դու տեսնում ես, որ կուում են։ Ուրեմն դու ո՞րի կողմն ես։

—Ես այդ տեսակ գործերում չեմ խառնվում։

—Բայց չէ՞ որ դու այս բոպէիս ասացիր, որ ուզում ես թաքցնել ինձ։

—Ի՞նչ կայ։ Երբ մի մարդու կամենում են բռնել, պէտք է նրան ազատել։ Ասում են, որ դու՝ օրէնքի համաձայն՝ պէտք է մեռնես։ Ես օրէնքից խաբարութիւն չունեմ։ Շատ անգամ քիչ է մնացել, որ ես քաղցածութիւնից մեռնեմ։ Մի՞թէ այդ-

պիսի օրէնք էլ կայ։

—Շատ ժամանակ է՞, ինչ որ մուրացկանութիւն ես անում։

Ամբողջ կեանքս մուրացկանութեամբ եմ անց կացրել։

—Բայց դու գիտե՞ս, որ ով որ ինձ մատնի, լաւ փող կը ստանայ «կապոյտներից»։

—Գիտեմ։

—Վաթսուն հազար լիվը, ոսկով։

—Այն էլ ոսկով։ Այդ աւելի է, քան թէ թուղթ փողով։

—Մի ամբողջ հարստութիւն է,

—Ի հարկէ։ Ես էլ հէնց դրա մասին էի մտածում։ Կը գտնվի մէկը, որ կամենալով հարստանալ, հետամուտ կը լինի քեզ և կը մատնի։ Աւելի լաւ կանես, որ ինձ մօտ թաքնվես։ Իսկ վաղը «կապոյտները» իրանց լրտեսների հետ այստեղից կերթան, այն ժամանակ դու էլ կերթաս։

Մարկիզը հետևեց մուրացկանին։

Նոքա իջան դէպի ձորը։ Գետնի տակ, հին ծառերի արմատների արանքներում, գտնվում էր մի գետնափոր. այդ գետնափորը մուրացկանի ընակարանն էր։ Նա մութն էր և ցած. բայց երկու հոգու հարմար տեղ կար։ Անկիւնում դրած էր ջրի ամանը և մի սև հաց. իսկ դրանց մօտ թափված էին խորոված շաղգամներ։

—Արի՛ ընթրիք անենք, առաջարկեց տանտէրը։

Նրանք բաժանեցին շաղգամները։ Մարկիզը իր մօտ եղած սպիտակ պաքսիմատը կէս արաւ,

Б.Х.

իսկ մուրացկանը իր սև հացը։ Կերան և վրան էլ նոյն ամանից ջուր խմեցին։

—Խօսակցութիւնը դարձեալ սկսվեց։

—Ուրեմն դու չը գիտէս, թէ ում աջողութիւն ցանկանաս, հարցրեց մարկիզը։

—Մի կողմի աջողութիւնը միւս կողմի դըժբախտութիւնն է, պատասխանեց մուրացկանը։ Ես մէջը չեմ խառնվում։

—Անունդ ինչ է։

—Ինձ անուանում են «Ծերուկ»։ Քառասուն տարի կը լինի, որ այդպէս են անուանում ինձ։

—Բայց չէ՞ որ քառասուն տարի առաջ դու ջահել ես եղել։

—Ես չեմ յիշում թէ երբ եմ ջահել եղել։ Տես, ես և դու մի տարիքի մարդիկ ենք. դու առոյգ ես, առողջ, իսկ ես՝ հազիւ եմ կարողանում ոտներս շարժել։

—Դու այստեղացի՞ ես։

Այստեղացի եմ։

—Դու ինձ ո՞րտեղից ես ճանաչում։

—Ի՞նչպէս չը ճանաչեմ քեզ։ Քո կալուածքը այստեղ է։ Սրանից երկու տարի առաջ դու գնացիր Անգլիա։ Ես քեզ դեռ առաջ էլ շատ եմ տեսել։

—Իսկ ես բոլորովին չեմ յիշում քեզ։

—Ես մուրացկան եմ. մուրացկանին ո՞վ կը յիշի։

—Ես քեզ մոտիկուց տեսել եմ։

—Այն էլ քանի՞ անգամ։ Ողորմութիւն ես տուել. տուողը՝ չի էլ նայում. իսկ վերցնողը՝

Հ-ԲԵՐ ԲԱԿԵՐ

ամենքին էլ միատ է պահում։ Երբեմն օրերով ուտելու հաց չի լինում։ Մէկը քեզ մի կոպէկ է շպրտում. այդ կոպէկը—հաց է։ Ի՞նչպէս կարելի է միտը չը պահել։ Իսկ հիմա իմ հերթն է. ես եմ քեզ օգնում։

—Դու ինձ ազատում ես։ Ուրեմն աւելի քան օգնութիւն։

—Ազատում եմ։ Միայն մի պայմանով։

—Ի՞նչ պայմանով։

—Որ դու այստեղ ոչ մի չար դիտաւորութիւն չունենաս։

—Ընդհակառակը՝ իմ դիտաւորութիւնները բարի են։ Ես կռւում եմ ճշմարտութեան համար։

—Եթէ այդպէս է, փառք Աստուծոյ։ Հիմա քնենք։

Նրանք միմեանց մօտ պառկեցին խոտի վրա և երկուսն էլ քնեցին։

Առաւօտեան, երբ մարկիզը զարթնեց, մուրացկանն արդէն վեր էր կացել։ Նա կանգնած էր իր գեղնափոր տնակի մօտ, յենվելով փայտի վրա։ Արեգակը լուսաւորում էր նրան։

—Ժամի չորսն է, ասաց նա մարկիզին։ Մօտիկ եկեղեցու զանգակատան ժամացոյցը խփեց. քամին բերում էր ձայնը։ Գիւղում ամեն ինչ հանդարտ է։ «Կապոյտները» կամ քնած են, կամ թէ հեռացել են։ Հիմա մենք պէտք է միմեանցից բաժանվենք։ Ես իմ գործին կը գնամ, դու՝ քո։

—Մնաս բարով։ Յետոյ աւելացրեց.—Գնալիս կարող ես հետդ շագանակ վերցնել։

Ասաց ու գնաց։

Մարկիզը վերկացաւ. նայեց չորս կողմը։ Այնտեղ, ուր նա երէկ պատահել էր մուրացկանին, կանգնեցրած էր մի քարէ հին խաչ, որի վրա կպցրած էր յայտարարութիւն։ Այդ յայտարարութիւնը մարկիզը դեռ երէկ էր տեսել և գիտէր, որ այդ էլ այն յայտարարութիւններից մէկն է, որ նա երէկ կարդացել էր։ Նա միտը բերեց, որ երէկ՝ մթին լինելու պատճառով, չկարողացաւ բոլորը պարզ կարդալ։ Այժմ արեգակը պայծառ լուսաւորում էր։ Գեղեցիկ առաւօտ էր. կալմբակաաար թռչունները երգում էին. ծառերը՝ ծլվլում։ Մարկիզը գնաց դէպի խաչը, որ երէկվայ կիսատ մնացածը կարդայ։

Այն տողերի տակ, որոնցով իրան բռնելու համար պարգև էին խոստանում, մանր տառերով գրված էր.

«Երբ մարկիզ Լանտենակը բռնվի, իսկոյն գնդակահար կլինի»։ Ստորագրված էր. «Վաշտի հրամանատար՝ Գովէն»։

—Գովէն... կրկնեց մարկիզը ինքն իրան։

Մի անգամ էլ կարդաց, դառնութեամբ կրկնեց այդ անունը, յետոյ նայեց դէպի հեռուն և գնաց։

Գովէնը նրա հարազատ քրոջ որդին էր, և միևնոյն ժամանակ նրա թշնամին, որովհետև հանրապետականների կողմն էր և գնդապետ Սիմուրդէնի սանը։ Գնդապետ Սիմուրդէնը, որ խելօք և հաստատակամ մարդ էր, սիրում էր Գովէնին,

ինչպէս իր ընկերներից և ստորադրեալներից ամենալաւին։ Բացի դրանից անզաւակ լինելով, Սիմուրդէնը սիրում էր Գովէնին այնպէս, ինչպէս հայրը սիրում է իր որդուն։ Նրանք միևնոյն գաղափարի մարդիկ էին և միևնոյն ձգտումներն ունէին։ Արիւնակից չէին նրանք, բայց հոգւով միմեանց շատ մօտ էին։ Սիմուրդէնը ամենալաւ մարդն էր։ Նրանք երկուսն էլ ջերմ կերպով սիրում էին հայրենի երկիրը, երկուսն էլ պատրաստ էին իրանց կեանքը զոհել հայրենիքի համար, երկուսն էլ Լանտենակին և նրա կողմնակիցներին համարում էին հայրենիքի թշնամի։

II

ԱՌԵՐՄՈՆՔ

Մուրացկանը հեռու գնաց։ Նա վերադարձաւ ուշ, իրիկնադէմին։ Վերադառնալիս նա տեսաւ, որ գիւղից մեծ ծուխ է բարձրանում։ Ծուխը զանազան տեսակ է լինում, նայած թանձրութեանը և գոյնին։ Նա լինում է հանդարտ, այդ՝ վառարանի ծուխն է, երբ ընտանիքը իր համար կամ ճաշ է պատրաստում, կամ ընթրիք. լինում է զարհուրելի, չարագուշակ, այդ՝ հրդեհի ծուխն է։ Մուրացկանը իսկոյն գլխի ընկաւ, որ իր տեսած ծուխը չարագուշակ է. ծխի քուլաները՝ բորբոքված կրակի միջից վեր էին բարձրանում. երկինքը կարմրել էր կրակի բոցերից։

Նա գնաց դէպի գիւղի կողմը։ Նա կամենում էր իմանալ, թէ ինչ է պատահել այնտեղ։

Մօտակայ բլրակից ամեն ինչ պարզ երևում էր. գիւղի տեղը մնացել էր այրվող աւերակների մի կոյտ։

Մուրացկանը կարծես քար կտրեց։ Նրա առաջ ահագին խարոյկը վառվում՝ բորբոքվում էր, արգելող չլինար։ Մարդու հետք անգամ չէր երևում. ձայն չէր լսվում։

Բայց ո՞ւրտեղ են թաղ կացել բնակիչները։ Ճշմարիտ է, նոցա թիւը մեծ չէր, որովհետև գիւղն էլ փոքր էր, բայց եղածներն ո՞ւր են։ Ծերուկի համար այդ հանելուկ էր։ Նա շտապեց լուծել այդ հանելուկը։ Նրա սիրտը կտոր-կտոր էր լինում։

Մտենալով, նա տեսաւ մի սարսափելի սև կոյտ, որը մի կողմից թոյլ կերպով լուսաւորված էր լուսնի լուսով, միւս կողմից՝ հրդեհի լուսով։ Դրանք դիակներ էին։ Ծերուկը կռացաւ, որ տեսնի։ Սպանված զինուորներ էին դրանք։ Այն «կապոյտներից», որոնց նախընթաց երեկոյին նա կենդանի էր տեսել։ Ահա էլի դիակներ. դարձեալ դիակներ։ Վիրաւորված չը կայ, ամենքը մեռած են։ Երևի յաղթողները դիտմամբ էին բոլորին սպանել։

Այդտեղ ընկած էին երկու կին, միմեանց մօտ, պատի տակ։ Մէկի գլուխը չորս գնդակ էր ծակել։ Միւսը դունատ էր, աչքերը փակ, կարծես ուշաթափված լինէր։ Մուրացկանը շօշափեց նրա ուսի բոլորակ վերքը և կոտրած ոսկորը. բայց մարմինը դեռ տաք էր։ Նա ձեռքը դրեց նրա կրծքի վրա։ Սիրտը թոյլ կերպով բաբախում էր։

—Այստեղ կենդանի մարդ չը կայ, կանչեց նա բարձրաձայն։

Մի ինչ որ ձայն պատասխանեց.—Այդ դու ես, Ծերուկ։

Աւերակների միջից երկու գլուխ երևացին։ Երկու գիւղացի կարողացել էին ազատ մնալ կոտորածից։ Նրանք սիրտ արին և դուրս եկան աւերակների միջից։ Մօտեցան մուրացկանին։ Ծերուկը մատով նրանց ցոյց տուեց՝ իր ոտների մօտ ընկած կնոջը։

—Կենդանի՞ է, հարցրեց մէկը։

Ծերուկը գլխով արեց։

—Իսկ մի՞սը։ Գիւղացին ցոյց տուեց միւսին։

Ծերուկը գլխով բացասական պատասխան տուեց։ Գիւղացին սկսեց ցածր ձայնով պատմել, վախենալով ձայնը բարձրացնելու։

Ահա, ինչպիսի՞ անգթութիւններ են գործում... Տունս այրեցին... Ո՜հ, որքան ես Աստուծուն փառք էի տալիս, որ կին, երեխայ չունիմ։ Տէր իմ Աստուած, որքա՞ն մարդ կոտորեցին։ Ամենքին, ում կարողացան։ Մարիամը, ահա այս վիրաւորվածը, երեք երեխաներ ունէր։ Երեք փոքրիկ մանուկներ։ Երեխաներն աղաղակում էին «մայրիկ» էին կանչում. մայրն էլ երեխաներին էր կանչում։ Մօր վրա հրացան արձակեցին, իսկ երեխաներին վերցրին իրանց հետ տարան։ Տէր Աստուած, ինչպէս մարդիկ դաղան են դառնում։ Ցարձակվեցան։ Ոչ ոք չէր սպասում...Ու։ ըեմն մայրը կենդանի է։ Պէտք է նրա համար հոգալ-

Քո բնակարանը տանենք։ Ծերուկ։

Մուրացկանը դարձեալ գլխով արեց։ Նա չէր կարողանում խօսել։ Հաստ ճիւղեր կտրատեցին, պատգարակ շինեցին, և վրան դնելով վիրաւորվածին՝ տարան։

Ճանապարհին, գիւղացիների մէջ, նոյն օրվայ անցքի մասին էլի խօսակցութիւն սկսվեց։

—Բոլորին կոտորեցին։ Աժեն ինչ այրեցին։

—Ա՛յ, թէ ինչեր են անում հիմա։

—Տեսաք, ինչպէս էին սպանում։

—Ի՞նչպէս չը տեսայ. մի բարձրահասակ մարդ կար, նա էր հրամայում սպանել։

—«Սպիտակների» մի ամբողջ զօրաբաժին յարձակվեց։ Իսկ այդ բարձրահասակ մարդը նրանց գլխաւորն է, մարկիզը։

—Ի՞նչ մարկիզ։

—Այստեղի մարկիզը, Լանտենակը։ Ասում են, նոր է վերադարձել Անգլիայից։ Տեղեկութիւն ստացվեց, որ նաւով եկել է։ Ուզեցին նրան բռնել, բայց նա, ինչպէս երևում է, ծպտեալ կերպով կարողացել է գալ և միանալ իր կողմնակիցներին։ Նրա կողմնակիցները սպասում էին նրան։ Նա իսկոյն նրանց օգնութեամբ յարձակվեց «կապոյտների» վրա։ Իսկ գիւղը հրամայեց կրակ տալ նրա համար, որ թոյլ էին տուել «կապոյտներին» մտնել գիւղը։ Ախր գիւղացին ինչպէս չը թոյլ տայ, որ զօրքը մտնի գիւղը։

Մուրացկանը ինքն իրան ասաց. «Հ՜ը...այ

թէ ինչպիսի՜ խաղ խաղաց Լանտենակը։ Եթէ առաջուց իմանայի՜»...

III

ՄԱՑՐԸ

Մարիամը ծանր կերպով էր վիրաւորված. գնդակը ՝ի՛նսել էր թոքի վերին մասը։ Գիւղացիների մէջ Ծերուկը բժիշկ էր համարվում. նա երբեմն բժշկում էր գիւղացիներին։ Ոմանք ասում էին, որ նա կախարդութեամբ է բժշկում։

Վիրաւորվածը պառկած էր նրա գետնափորում։ Ծերուկը վէրքերի վրա ինչ որ դեղ դրեց. վիրաւորվածը կամաց-կամաց առողջանում էր։

Մի անգամ հիւանդը Ծերուկի օգնութեամբ կարողացաւ դուրս գալ խրճիթից և նստել ծառի տակ Արևը տաքացնում էր նրան։ Նա երկար նայում էր դէպի հեռու, հեռու...

Ծերուկը ուրախ էր, որ կարողացաւ առողջացնել վիրաւորվածին։ Նա ժպտալով ասաց.

—Վէրքերդ, փառք Աստուծոյ, առողջացան։

Հիւանդը պատասխանեց.

—Գլխաւոր վէրքը չառողջացաւ։

Նա դեռ ևս դժուարութեամբ էր կարողանում խօսել։ Մի քիչ լռելուց յետոյ աւելացրեց.

—Դու չը գիտէ՞ս որտեղ են նրանք։

—Ովքե՞ր, հարցրեց Ծերուկը։

—Երեխաներս։

Առաջ էլ նա զառանցանքների մէջ անդադար նրանց անունը տալիս էր Ծերուկը աշխա-

տում էր մոռացնել տալ, որ նա չը վրդովվի։ Սուտ ասել, յուսադրել նրան,—նա չէր կարողանում։ Երեխաների մասին ինքն էլ ոչինչ չը գիտէր և կարծում էր, որ նրանք արդէն մեռած են։

Տեսնելով, որ իրան չեն պատասխանում, կինը կրկնեց համարեա թէ գոռալով.

—Ո՞րտեղ են երեխաները։

—Ծերուկը կախ գցեց գլուխը, ինչպէս յանցաւոր։ Նա սկսեց մտածել, որ եթէ ինքը ազատած չը լինէր Լանտենակին, այդ կինը հիմա այդքան դժբախտ չէր լինիլ։

—Այսպէս էլ բան կը լինի, մտածեց նա.—ուզեցայ բարութիւն անել, բայց չարութիւն դուրս եկաւ։ Ես նրան խղճացի, իսկ նա չի խղճում։

Մուրացկանի սիրտը լցված էր դառնութեամբ։ Բարի գործը ճնշում էր նրան, ինչպէս յանցանք։ Գայլին ազատեց, և ոչխարների կորուստեան պատճառ դարձաւ։

—Այսպէս չի կարելի ասաց կինը։

—Ի՞նչը չի կարելի։

—Զիմանալ թէ ո՞ւր են երեխաները։ Աւելի լաւ է մեռնեմ, քան թէ նրանց մասին տեղեկութիւն չունենամ։

—Մի վրդովվիր։ Տենդը կաւելանայ։

Մարիամը բարկացած հարցրեց.—Ե՞րբ կարող եմ հեռանալ այստեղից։

—Հեռանա՞լ։

—Ի հարկէ հեռանալ։ Միշտ խօ չեմ նստելու այստեղ։

—Եթէ վրդովվես, երկար ժամանակ կը մնաս։ Իսկ եթէ հանդարտ կենաս, այն ժամանակ շուտով կարող ես հեռանալ։

—Ի՞նչպէս հանդարտ կենամ։ Դու չես հասկանում։ Դու որդիք չունիս, իսկ ես ունեմ։ Բայց ո՞րտեղ են նրանք։ Ով որ չէ տեսել, նա չէ կարող դատել։ Դու երբէք զաւակ չէս ունեցել։

—Ո՛չ, պատասխանեց մուրացկանը։

—Հէնց բանն էլ դրանումն է։ Ես զաւակներ ունեմ։ Ինչո՞ւ համար նրանք ինձ մօտ չեն։ Զը գիտեմ, ի՞նչ է պատահել։ Ես ոչինչ չը հասկացայ։ Ամուսնուս սպանեցին, ինձ վրա հրացան արձակեցին։ Եւ որդիքս էլ մօտս չեն։ Այս ի՞նչ բան է։

—Մի խօսիր, ասաց Ծերուկը։—Կը վնասես քեզ. ինչքան շատ վրդովվես, այնքան էլ կը վատանաս։

Կինը լռեց։ Այնպէս լռեց, որ մի խօսք անգամ չէր կարելի դուրս քաշել նրա բերանից. Ամբողջ օրերով նա նստում էր ծառի տակ և տեղից բոլորովին չէր շարժվում։ Երևի միշտ իր երեխաների մասին էր մտածում։ Ծերուկը սկսեց վախենալ, թէ մի գուցէ խեղճ կինը խելագարվի։ Փորձեց զբաղեցնել նրան։ Ասում էր, որ ուրախութեամբ նրա հետ միասին կը գնար երեխաներին որոնելու, բայց ցաւը նրանումն է, որ ծեր է, երկար ման գալ չի կարողանում։

Մի անգամ նա բերեց նրա համար թել և մատնոց. ուզեց կար անել տալով դրդեցնել նրան. Մարիամը սկսեց կար անել, կարկատեց իր

Գրադարան Библиотека 73/1. 1922 Ազգային գրադարան Национальная библиотека имени А. Мясникяна

հագուստը։ Հէնց մուրացկանն էլ այդ էր ուզում, որ նա անդադար միևնոյն բանի մասին չը մտածի։

Կարելու ժամանակ երբեմն մի ինչ որ տխուր բան էր երգում։ Շատ կամաց ձայնով անուններ էր տալիս. երևի իր որդոց անուններն էր տալիս։ Վերջապէս նա մի օր իր համար մի տոպրակ կարեց և շագանակով լցրեց։ Առաւօտեան Ծերուկը տեսաւ, որ նա պատրաստվում է գնալու։

—Ո՞ւր, հարցրեց նա։

Մարիամը պատասխանեց.

—Գնում եմ նրանց որոնելու։

Ծերուկը մինչև անգամ չը փորձեց արգելել նրան։

Մարիամը գնում էր, ուր որ աչքը տեսնում էր։ Գնում էր առանց ցերեկ և գիշեր նայելու. ուտում էր, ինչ որ պատահում էր, ողորմութիւն էր խնդրում. եթէ հաց չէր գտնում, խոտ էր ուտում. քնում էր մերկ գետնի վրա, թուփերի տակ, բաց դաշտում, երբեմն էլ անձրևի տակ։ Գնում էր գիւղից գիւղ, տնից տուն։ Ամեն տեղ հարց ու փորձ էր անում։ Կանգնում էր շէմքերի մօտ։ Նրա հագուստը զզզվել էր։ Երբեմն էլ հալածում էին։ Երբ տներից հալածում էին, նա անտառների միջով էր գնում։

Ճանապարհը նրան անծանօթ էր, մինչև այդ ժամանակ՝ նա իրանց գիւղից հեռու չէր գնացել. գնում էր առանց իրան հաշիւ տալու. չիմանալով թէ ուր է գնում, նա շատ անգամ, իզուր տեղը,

այս ու այն կողմ էր գնում. երբեմն նա պտտում էր համարեա թէ միևնոյն տեղում. առանց այդ նկատելու։ Կամ մեծ ճանապարհով էր գնում. կամ թէ կածաններով։ Առաջ պատռոտած կօշիկներով էր, յետոյ երբ կօշիկները բոլորովին պատռվեցան, բոբիկ, վերջապէս արիւնաթաթախ ոտներով էր մաղ գալիս։

Ասում էին, որ մօտիկ մի տեղում պատերազմում են, բայց նա պատերազմի հետ գործ չունէր. նա կարծես ոչինչ չէր տեսնում, ոչինչ չէր լսում, ոչնչից չէր վախենում։ միայն իր երեխաներին էր փնտրում։ Ամեն մի պատահողին հարցնում էր.—Երեք երեխաներ չէ՞ք տեսել։

Զարմացած նայում էին նրա վրա։

—Չէ՞ք տեսել երկու փոքրիկ տղայ և մի աղջիկ, աւելացնում էր նա։

Յետոյ էլի աւելացնում էր.—Մեծը չորս ու կէս տարեկան է, փոքրը մի տարեկան և ութ ամսական։ Չէ՞ք տեսել։

Դարձեալ նայում էին նրա վրա՝ առանց պատասխանելու։ Նա շարունակում էր.—Նրանց խլել են ինձանից։ Իսկ նրանք իմս են։ Ահա թէ ինչու եմ փնտրում։

Մարդիկ բացասական կերպով գլուխները շարժում էին և հեռանում։

Բայց մի անգամ, մի գիւղացի կանգ առաւ։ Սկսեց մտաբերել։

—Երեք երեխաների մասին ես հարցնում, հարցրեց նա։

—Այո։

—Երկուսը տղայ է։

—Այո։ Մէկ էլ մի աղջիկ։

—Լսել եմ, որ մի զօրաբաժնում երեք երեխայ կայ։ Հրամանատարը, Զը գիտեմ որտեղ, հրամայել է վերցնել նրանց։ Պէտք է որ նրա մօտ լինեն երեխաները։

—Որտեղ, բացականչեց մայրը։

—Գնա Տուրգ, ասաց գիւղացին։

—Այնտեղ կը գտնե՞մ երեխաներիս։

—Կարելի է գտնես։

—Ի՞նչպէս է անունը։

—Տուրգ։

—Ի՞նչ բան է Տուրգը։

—Տեղի անուն է։

—Գի՞ւղ է։

—Զը գիտեմ, չեմ եղել այնտեղ.

—Հեռո՞ւ է։

—Ո՞ր կողմն է գտնվում։

Գիւղացին ցոյց տուեց ձեռքով.—Տեսնո՞ւմ ես դէպի այն կողմը գնա, ուր արեգակը մայր է մտնում։

Կինը իսկոյն ճանապարհ ընկաւ։ Գիւղացին նրա յետևից կանչեց.

—Բայց զգոյշ կաց. այնտեղ կռիւ կայ։

Կինը իսկի յետ էլ չը նայեց, և շարունակեց իր ճանապարհը։

IV.

ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Տուրգը՝ բերդ էր։ Նա նման էր բոլորակ բուրգի և շինված էր ժայռի վրա։ Բերդը ժայռի նման ամուր էր։ Լանտենակը իր մարդկանցով փակվել էր այնտեղ։ Գօվէնը պաշարել էր բերդը։ Լանտենակի մարդկանցից քիչ էր մնացել, որովհետև գիւղի աւերումից յետոյ՝ նա ստիպված էր էլի մի քանի կռիւներ մղել։ Գօվէնը անհամեմատ ուժեղ էր, մանաւանդ որ նրանից ոչ հեռու գտնվում էր Սիմուրդէնի ամբողջ գունդը։

Մի անգամ, երեկոյեան, երբ դեռ նոր էին դուրս եկել ասպաղերը և անտառում տիրում էր խորին լռութիւն,—ոչ մի տերև, ոչ մի խոտ չէր շարժվում,—աշտարակից լսվեց պատերազմական փողի զիլ ձայնը։ Ներքևից նոյն կերպով պատասխանեցին։

Այդ ձայնի վրա՝ բանակի մարդիկ իրար անցան՝ ինչպէս մրջիւնները մրջնանոցում։

Փողը հնչեց երկրորդ անգամ. նրան պատասխանեցին ներքևից։

Այդ բերդը և բանակն էին միմեանց հետ բանակցում։ Բերդը հարցրեց.—Համաձայն է՞ք լսել մեզ։

Բանակը պատասխանեց.—Համաձայն ենք։

Մի քանի բոպէով հաշտութիւն կայացաւ։

Փող-փչողը բարձրաձայն և պարզ կերպով ասեց իր ճառը.

—Լսեցէ՛ք։ Ես խօսում եմ մարկիզ Լանտե-

նակի կողմից, կրկնում եմ նրա խօսքերը։ Ձեր կռիւը մեզ հետ անարդար է։ Մենք այստեղ ապրում էինք խաղաղ կերպով և ոչ ոքի վատութիւն չենք արել։ Դուք ձեր մէջ նոր կարգեր էք սահմանել և եկել մեզ դէմ, որ զօռով ստիպէք մեզ ապրել ձեզ նման։ Դուք սկսել էք այրել մեր տները, սպանել մեր կանանց և որդոց։ Դուք մեր դէմ անտառներում թակարդներ լարեցիք. իսկ հիմա էլ պաշարել էք մեզ այստեղ։ Դուք շատ էք, մենք քիչ։ Դուք ամբողջ գունդ էք կազմում, իսկ մենք ընդամենը տասն և ինը հոգի ենք այստեղ։ Մի մեծ քաջագործութիւն չէ, եթէ մեզ յաղթէք, բայց մենք հեշտութեամբ անձնատուր չենք լինիլ։ Մարկիզ Լանտենակը հրամայում է ասել ձեզ.—Մեզ մօտ այստեղ երեք երեխաներ կան. մերոնք դրանց յափշտակել են այն գիւղում, ուր մենք ջարդեցինք ձեր վաշտը։ Կամենում էք թողնել մեզ ամենքիս՝ տասն և ինն հոգուս, որ ազատ, անվնաս անցնենք ձեր մօտով։ Այդ դէպքում այն երեխաներին ձեզ կը յանձնենք, իբրև փրկանք մեզ համար։ Եթէ մերժէք, մենք բերդը կրակ կը տանք։ Երեխաներն էլ մեզ հետ կը ոչընչանան։ Այն ժամանակ նրանց մեղքը ձեր վզին։ Այդպէս էլ իմացած եղէք։ Եթէ մեզ կը թողնէք հեռանալ, նրանք կազատվեն. իսկ եթէ ոչ՝ նրանք կը մեռնեն։ Վճռեցէք։

Բերդից խօսողը լռեց։ Ներքևից պատասխանեցին.—Ամենքին՝ առանց մի որ և է արգելքի բաց կը թողնենք, բացի Լանտենակից։ Նա պէտք է մեռնի։

Բերդից պատասխանեցին.—Մեր պայմանները չենք փոխիլ։ Երեք երեխաներին տալիս ենք իբրև փրկանք ամենքիս համար, առաջինից մինչև վերջինը։

Սիմուրդէնը ինքը պատասխանեց, կարճ և խիստ կերպով.—Մենք համաձայն չենք։

Գօվէնը մի քիչ մեղմ կերպով աւելացրեց,—Քսան և չորս ժամ ժամանակ ենք տալիս։ Խորհեցէք։

V.

ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹԻՒՆ

Մարիամը անդադար առաջ էր գնում դէպի այնտեղ, որ նրան ցոյց էին տուել։ Մի անգամ նա անցնում էր մի գիւղով։ Այդտեղ մարդիկ հաւաքվել էին պատին կպցրած մի ինչ որ թղթի մօտ։ Մէկը կարդում էր, միւսները լսում էին.

«...Մահուան պատժի կենթարկվի նա, ով որ կը համարձակվի ուտելեղէն կամ թէ մի որ և է օգնութիւն հասցնել վերև յիշված տասն և ինը ապստամբներին, որոնք թաղնված են Տուրգում...»

—Տուրգում, հարցրեց Մարիամը։

Հէնց որ նրա ականջին հասաւ այդ անունը, նա մոռացաւ ամեն բան, և այլ ևս ոչ մի խօսքի վրա ուշադրութիւն չէր դարձնում։ Նրա վրա կասկածանքով նայեցին։

—Տուրգում, կրկնեց նա։

Մի կին՝ հաճարից թխած հացով լի զամբիւղը ձեռին, մօտեցաւ նրան և շշնջաց.—Լռիր։

Մարիամը լռեց, չը հասկանալով՝ թէ ինչու պէտք է լռել։ Միթէ չի՞ կարելի հարցնել։ Նա

գնաց կանգնեց մի ուրիշ տեղ և կրկին սկսեց լսել։

Խօսում էին միևնոյն թղթի մասին։

Մէկը ասում էր.—Կարծում են, որ եթէ նրանց բռնեն, ամեն բան կը վերջանայ։ Կարծես թէ բոլորը տասն և ինը հոգի են։

Միւսը աւելացրեց.—Լաւ հաշիւ է։ Դրանց կը բռնեն, ուրիշները դուրս կը գան։

—Ի՞նչ յիմար էք, ասաց մի ծեր գիւղացի.—Կարծում էք շուտ կը գտնվի մի ուրիշ Լանտենակ։ Նրանց գլխաւոր ցաւը Լանտենակն է. նրան են ուզում բռնել. իսկ նա հիմա նրանց ձեռքումն է։

—Դեռ ոչ բոլորովին, անվստահ կերպով ասաց մի ջահել գիւղացի։

Ծերունին շարունակեց.—Լանտենակը բոլորի հոգին է։ Առանց նրան՝ մնացածները ոչինչ։

Մէկը հարցրեց.—Իսկ ի՞նչով է աւելի Լանտենակը։

Նրան պատասխանեցին.—Նա ոչ ոքի չէ խնայում։ Մինչև անգամ կանանց վրա էլ է հրացան արձակում։

Մարիամը ասաց.—Այդ ուղիղ է։

Այդ խօսքերը լսելով՝ ամենքն էլ նայեցին նրա վրա։ Մարիամը աւելացրեց.

—Նա հրամայեց ինձ վրա հրացան արձակել։

Նրա տեսքը զարհուրելի էր. ցնցոտիներ հագած, մազերը գդգդած, դէմքը վայրենի։

—Իսկ և իսկ աւազակ է, մրմրթաց մի գիւղացի։

—Լրտեսելու չը լինի եկած, ենթադրեց միւսը։

—Լռի՛ր, հեռացի՛ր, կրկին ասաց հաց ծախող գեղջկուհին, մօտենալով նրան։

Մարիամը պատասխանեց.—Ես ոչ մի վատ բան չեմ անում. ես իմ երեխաներիս եմ որոնում։

Գեղջկուհին նայեց բոլորին, մատը դրեց ճակատի վրա և ասաց.—Խելքը տեղը չի։

Յետոյ մի հաց տուեց նրան և ասաց.—Կե՛ր։

Մարիամը վերցրեց՝ առանց շնորհակալութիւն անելու, և սկսեց ագահութեամբ կծոտել։

—Սրա խելքը տեղը չի, վճռեցին գիւղացիք. կարծես գազան լինի որսը պատռոտում։

Մէկը միւսի յետևից նրանք ցրվեցին. մնաց միայն հաց ծախող կինը։ Հացն ուտելուց յետոյ Մարիամը հարցրեց նրան.—Կարո՞ղ ես ասել թէ որտեղ է գտնվում Տուրգը։

—Թող այդ Տուրգը, ա՛յ անբախտ։ Բաւական է։

—Ես պէտք է Տուրգ գնամ։ Ի՞նչպէս գնամ։

—Ի՞նչ ես կրկնում՝ Տուրգ, հա՛ Տուրգ։ Խելքդ գնացել է, ի՞նչ է, այդ Տուրգի համար։ Ինչո՞ւ ես գնում այնտեղ... Աւելի լաւ է գաս ինձ մօտ և հանգստանաս։ Անշուշտ յոգնած կը լինես։

—Ես ժամանակ չունեմ հանգստանալու, ասաց Մարիամը։

—Նայիր տես ոտներդ ինչ օր են ընկել, ցոյց տուեց գեղջկուհին։

Մարիամը սկսեց պատմել.

—Երեխաներիս գողացել են։ Մի աղջիկ և

երկու տղայ։ Հիմա ես անտառից եմ գալիս. ինձ բժշկեց Ծերուկը, մուրացկանը։ Իմ ոսկորներից մէկին գնդակ էր դիպել։ Կարող ես նրանից հարցնել։ Այս ամենը եղած բան է։ Ես ինձանից չեմ հնարում։ Երեք երեխաներ եմ ունեցել։ Ես այդ կարող եմ ապացուցանել։ Փոքրը աղջիկ է. անունն է Ժորժետա։ Ամուսնուս սպանել են։ Նա ոչ մի վատ բան չէր արել։ Ցոյց տուեցէք ինձ ճանապարհը։ Ես խելագար չեմ. ես մայր եմ, երեխաներիս եմ փնտրում։ Ահա ամենը։ Տուրգ եմ գնում։ Ճանապարհը չեմ ճանաչում։ Այսօր մի դատարկ ամբարի մէջ եմ գիշերել։ Ես լրտես չեմ։ Ես ճշմարիտ եմ ասում։ Եւ ինչ կայ ինձ չօգնելու, երբ ես երեխաներիս եմ որոնում։ Ես այստեղացի չեմ։ Բոկ ինձ վրա հրացան արձակեցին, չը գիտեմ ինչու։

Հաց ծախող կինը շարժեց գլուխը և ասաց.—Լսիր, սիրելիս։ Հիմա վտանգաւոր ժամանակ է։ Հարկաւոր չի այդպիսի անմիտ բաներ խօսել։ Կը կարծեն, թէ խորամանկութիւն ես անում, լրտես ես։ Կը ձերբակալեն քեզ։

—Ինձ միայն Տուրգի ճանապարհը ցոյց տուէք։ Ինչպէս գնամ այնտեղ։ Ի սէր Աստուծոյ, ասացէք։

Հաց ծախող կինը բարկացաւ.

—Քեզ բան հասկացնել չի լինիլ։ Չը գիտեմ՝ որտեղ է Տուրգը։ Գիտենամ էլ, չեմ ասիլ։

—Բայց ես էլի կը գնամ այնտեղ, ասաց Մարիամը և հեռացաւ։

Բարեսիրտ գեղջկուհին նայեց նրա ետևից և ասաց.—Մէկն էլ տամ ճանապարհի համար...

Վազելով հասաւ նրան, էլի մի հաց տուեց և ասաց.—Ցետոյ կը քաղցածանաս, կուտես։

Մարիամը լուռ վերառաւ հացը։ Մի քիչ յետոյ գիւղի ծայրին նրան պատահեցին երկու աղջիկ. հացը տուեց նրանց։

Նրա առաջ կար մի անտառ։ Նա գնաց անտառով։ Միևնոյն չէ, թէ որտեղով գնայ, քանի որ ոչ ոք չէ կամենում ցոյց տալ ճանապարհը։ Նա երկար ժամանակ գնում էր։ Առաջ կածանով էր գնում, յետոյ կածանը կորցրեց. ծառերի ճիւղերը չէին թողնում, որ նա առաջ գնայ, բայց նա էլի գնում էր։ Ո՞ւր։ Ա՜խ, եթէ այնտեղ լինէր գնում, ուր հարկաւոր էր։ Սկսեց կանչել. ոչ ոք չը պատասխանեց։ Իր առջև մի վտակ տեսնելով, չոքեց և ջուր խմեց։ Ցետոյ սկսեց աղօթել։

Շուտով վերջացաւ անտառը, որի ետևը կար մի շատ նեղ ձոր, իսկ մի քիչ դէնը—մի տափարակ և լայն բլրակ՝ ծածկված մանր թփերով։ Նա տեսնում էր իր առաջ ահագին տարածութիւն, և այդ ամբողջ տարածութեան վրա չէր երևում ոչ մարդ, ոչ էլ բնակութիւն։

Այդ ամայութիւնը տեսնելով, խեղճ կինը յուսահատվեց։ Ոտները ծալվում էին։ Նա սկսեց խելագարվածի նման կանչել.—Ոչ ոք չը կա՞յ այստեղ։

Եւ կարծես իբրև պատասխան նրա հարցին,

ոչ շատ հեռու մի տեղից՝ որոտմունքի նման մի ձայն լսվեց։ Դա որոտմունք չէր, այլ հրացանի կամ թնդանօթի ձայն։

Դժբախտ կինը տեղիցը վեր թռաւ, կենդանացաւ։—Կարելի է այնտեղ են...

Նա սկսեց բարձրանալ բլրակի գլուխը։ Մի քանի րոպէից յետոյ նա իր առաջ, ժայռի վրա տեսաւ մի բերդ, իսկ բերդի յետև՝ թանձր, մըթին անտառ։

Մարիամը գնաց դէպի այդ բերդը։ Մութը կոխում էր գետինը։

Այդ ժամանակ լրացաւ այն պայմանաժամը, որ նշանակել էին Լանտենակի թշնամիները։

VI

ԾԱՐԶԱԿՈՒՄ

Պայմանաժամը լրացած՝ Գօվէնը առաջ տարաւ իր զօրքը, որ յարձակմամբ վերցնի Տուրգը։ Պատի ներքևի մասը արդէն սաստիկ կերպով վնասվել էր գնդակներից, սակայն բերդի մարդիկը չը հուսահատվեցին. բարձրացան երկրորդ յարկը և այնտեղից կատաղի կերպով հրացանաձգում էին։ Զինուորները գնդակահար էին լինում և միմեանց ետևից ընկնում.

Այդ ժամանակ ունտեր-օֆիցեր Բաղուբը մտածեց մի շատ դժուար գործ կատարել. երկու ատրճանակ գօտին խրած՝ նա դրսի պատով մա-

գցեց մինչև երրորդ յարկը։ Կատուի ճարպիկութիւն էր հարկաւոր դրա համար: Բաղուբը ունէր այդ ճարպիկութիւնը։ Նա բարձրացաւ հէնց դէպի այն սենեակը, ուր զետեղված էին զէնքերը: Լուսնեակի լոյսը օգնեց նրան տնտղել հրացանները և ատրճանակները։

Մինչև այդ ժամանակ պաշարվածների վրա հրացան էին արձակում միայն ներքևից. այժմ նրանց վրա գնդակներ էին տեղում և վերևից, երրորդ յարկից։ Միաժամանակ երկու հոգի ընկան մեռած. մնացածները շտապեցին թաքնվել սենեակներից մէկում։ Ոչ ոքի մտքովն անգամ չէր անցնում, որ վերև միայն մի մարդ կայ։

—Ճար չը կայ պէտք է մեռնել, ասաց մարկիզը։

—Միայն թշնամիներին սպանելով, աւելացրեց նրա ընկերներից մէկը։

Բայց այդ րոպէին մի անսպասելի բան պատահեց։ Սենեակի անկիւններից մէկում՝ բարձրացաւ մի սալ քար, և այդտեղից, գաղտնի դռան տակից, որը առաջ ոչ ոք չէր նկատել, երևաց մի մարդու գլուխ։ Դա մարկիզի հաւատարիմ մարդկանցից մէկն էր։

—Ի՞նչպէս եկար այստեղ, հարցրեց մարկիզը։

—Բացատրելու ժամանակ չկայ։ Փախէք։ Այս անցքով գնացէք, և տասը րոպէից յետոյ՝ կը հասնէք անտառը։

—Շատ լաւ։ Ամենքդ դուրս եկէք... Իսկ ես ամենից յետոյ... ասաց Լանտենակը։

—Առաջ պէտք է կրակ ցցենք, պէտք է մեր սասծը կատարենք, որ լաւ ճանաչեն մեզ, նկատեց մէկը։

—Շուտ, մարկիզ, շտապեցրին միւսները։

Մէկը միւսի ետևից նրանք սկսեցին իջնել նեղ սանդուղքով։ Լանտենակը ածուխով՝ սպիտակ պատի վրա՝ խոշոր տառերով գրեց մի քանի խօսք և վառեց պատրոյգը։ Կրակը արագութեամբ տարածվեց ամեն կողմ...

Այդ միջոցին Թշնամին շուտարած էր։ Գովէնը չէր տեսել, թէ ինչպէս Բաղուբը վերև բարձրացաւ, և այնտեղից անսպասելի կերպով երևացած օգնութիւնը՝ զարմացրեց նրան։ Նա կամեցաւ իմանալ թէ բանը ինչումն է և առ ժամանակ դադարեցրեց յարձակումը։ Յետոյ հրամայեց իր զինուորներին, որ սանդուղքով վերև բարձրանան. ասաց որ զգոյշ լինեն և նկատի ունենան, որ դռներից մէկի ետև Թշնամին կարող է դարան մտած լինել. ապա թէ ոչ կրկին կը սկսվի հրացանաձգութիւն և մարդկանց կոտորածը։

Իսկ Բաղուբը մնաց վերև, և չէր հասկանում, թէ ինչու ամեն բան հանդարտվեց. նա սպասում էր, մինչև որ իր օգնութիւնը կրկին հարկաւոր կը լինի։

Քառորդ ժամ անցաւ, մինչև որ գործը պարզվեց։ Զինուորները հրացանների կոթով կոտրեցին դուռը, որի յետևը թաց էին կացած «սպիտակները», և այնտեղ, դատարկ սենեակում, տեսան բաց, գաղտնի անցքը։ Գովէնը կարդաց ածուխով

գրած խօսքերը.—«Յտեսութիւն, քրոջ որդի»։ Ստորագրված էր՝ «Լանտենակ»։

Յետևից ընկնելը միտք չունէր։ Պարզ էր, որ այդ անցքը պէտք է տանի դէպի անտառը. իսկ փախստականին փնտրել անտառի մէջ՝ նոյնքան ծիծաղելի կը լինէր, որքան այնտեղ ասեղ փընտրելը։ Գովէնը և Սիմուրդէնը ամենից կարևոր համարում էին Լանտենակին բռնելը. բայց ինչպէս իմանալ՝ թէ նա ե՞րբ է փախել։ Նրանք կարծում էին, թէ նրա հետքն անգամ արդէն կորած կը լինի... Ուրեմն բերդի վերցնելը ոչ մի հետևանքի չը հասցրեց. . Սակայն Լանտենակը այնքան էլ հեռու չէր գտնվում, որքան կարծում էին։ Հասնելով անտառը, նա իսկոյն արձակեց իր բոլոր մարդկանց, որոշելով՝ թէ ո՞ւր և ե՞րբ պէտք է կրկին հաւաքվել։ Ամենքը գիւղացու հասարակ հագուստով էին, ինչպէս և ինքը Լանտենակը։ Ցրվել անտառի զանազան կողմերում և ազատվել ջոկ-ջոկ—դժուար բան չէր։

Մարկիզը կանգ առաւ։ Նա ուրախ էր, որ ինքը ազատ է։ Մի փոքր առաջ նա գնում էր դէպի մահուան դուռը։ Մահից, ի հարկէ, չէր վախենում, բայց էլի լաւ էր համարում կենդանի մնալ։ Նայեց ժամացոյցին. ժամի տասն էր։ Այդ նրան զարմացրեց։ Դեռ տասն է։ Յարձակումն սկսեց ութին։ Մի՞թէ այն ժամանակից ի վեր այդքան քիչ ժամանակ է անցել. Հարիւր և քսան րոպէ։ Եւ որքա՜ն տանջանք կրեց այդքան կարճ ժամանակում... Նա ժամացոյցը դրեց իր

տեղը և փոխելով ճանապարհը, կամեցաւ հեռանալ։

Շրջակայքը սկսեց լուսաւորվել հրդեհի կարմիր լոյսով։ Բերդը այրվում էր։ Կրակը լափում էր ամեն բան. պատրոյգի ծայրը առաջուց անց էին կացրել դէպի գիւղավառ իրեղէնները, ձիւթի տակառները և դէպի յարդի ու չոր խոտի ահագին կոյտերը։ Լանտենակը միտը բերեց երեխաներին, որոնք փակված էին երկրորդ յարկում, գրքերի սենեակում։ Այդ սենեակի երկաթէ ծանր դռան բանալին իր գրպանումն էր։ Նա ձեռքը տարաւ. և մի առանձին բաւականութեամբ շոշափեց բանալին։ Երեխաները կայրվեն։ Եւ շատ էլ լաւ կը լինի։ Զէ որ նա առաջարկեց՝ ազատել նրանց։ Մեղաւորը նա է, ով չը համաձայնվեց։ Թող իմանան, որ ինքը իր խօսքը կատարող մարդ է։ Ասաց, որ երեխաները կը ոչնչանան և թող ոչնչանան։ Մեղքը նրա շինքին, ով որ չ'ուզեց իրան ազատ թողնել։

Երեք անմեղ երեխաներ, երեք զոհեր։ Իսկ ինքը ազատ։

Յանկարծ լսվեց մի յուսահատ, աղիողորմ աղաղակ, կամ աւելի լաւ է ասել մի գոռոց, որը տարածելով ամեն կողմ, մարդու սիրտ էր կըրատում։ Այդ մօր ձայնն էր, որ կանչում էր իր երեխաներին։

Մարիամը մօտեցաւ բերդին և բարձրացաւ նրա դէմ շինած պատնէշը հէնց այն բոպէին, երբ հրեղէն լեզուները բաղեղի չոր ճիւղերով բարձրանալով՝ ներքին յարկից վերինը, միախառնվեցան, մի ահագին բոց կազմեցին և միանգամից լուսաւորեցին ամեն ինչ՝ մօտակայ թանձր անտառի ծառերի գագաթները, բերդի ներսը և նրա առաջ կանգնած բանակը։

Միջին յարկի լուսամուտներից մէկում երեւեցան երեխաների գլուխներ։ Մարիամը աղաղակում էր յուսահատ ձայնով։ Լանտենակը լսեց և կանգ առաւ։ Նա չէր տեսնում կնոջը, բայց նրա դառն, աղէկտուր աղաղակները նրա սրտի խորքն էին թափանցում։

—Օգնեցէք, աղաղակում էր խեղճ կինը։— Ազատեցէք։ Դրանք իմ երեխաներն են։ Նրանք այրվում են։ Ով մարդիկ, օգնեցէք։ Այդպէս չի կարելի թողնել։ Ի՞նչու են իմ երեխաները այնտեղ։ Ես կը խելագարվեմ։ Օգնեցէք, ես նրանց մայրն եմ։ Ես օր ու գիշեր ճանապարհ եմ եկել։ Նրանք կայրվեն։ Փրկեցէք։ Շունը որ շուն է, նրան էլ պէտք է խղճալ։ Դրանք իմ երեխաներն են։ Ես վնտրում էի նրանց։ Տէր Աստուած, այս ինչ է։ Ինձ վրա հրացան արձակեցին, հիմա էլ երեխաներիս են այրում։ Իսկ ես որոնում էի։ Կարծում էի թէ չեմ հասնիլ։ Ոտներս արիւնաթաթախ են։ Ահա եկայ։ Գտայ նրանց։ Իսկ նրանք աչքերիս առաջին այրվում են։ Օգնեցէք։ Ազատեցէք։ Կամ թէ ինձ էլ սպանեցէք, որ չը տեսնեմ նրանց մահը։

Այն ինչ խեղճ կինը համարեա թէ խելագարվում էր սարսափից, պատնէշի վրա և խրա-

մատում բազմաթիւ զինուորների ձայներ էին լսվում.

—Սանդուղք դիր։

—Սանդուղք չը կայ։

—Պէտք է որ լինի։

—Պէտք է որ լինի, բայց չը կայ։

—Ջուր տուէք այստեղ, ջուր։

—Ջուր չը կայ։

—Ուրեմն դոնով պէտք է մտնել։

—Դուռը երկաթի է։

—Պէտք է կոտրել։

—Անկարելի է կոտրել։

Իսկ թշուառ կինը շարունակում էր աղաղակել։

—Շուտ։ Նրանք կայրվեն։ Ի՞մ սիրելի որդիքս։ Մի՞թէ նրանց չե՞ն ազատիլ։ Ինձ էլ նրանց հետ սպանեցէք։ Ինձ էլ կրակի մէջ գցեցէք։

Մարկիզը կրկին շոշափեց իր գրպանի բանալին։ Յետոյ, իսկոյն կռանալով, անյայտացաւ նոյն գաղտնի անցքում, որից դեռ նոր էր դուրս եկել։

VII

ՔԱՋԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Քսան զինուոր չարչարվում էին, որ կոտրեն երկաթէ դուռը։ Գովէնը կարգադրութիւններ էր անում։ Նիզերով չը կարողացան կոտրել դուռը։ Փորձեցին դռան տակով երկաթէ ձողեր անցկացնել, ձողերն էլ կոտրվեցին...

—Լուցկու նման կոտրվեցին, ասաց մի զինուոր։

Գովէնը յօնքերը կիտելով նկատեց.—Այս դուռը միայն թնդանօթով կարելի է կոտրել...

—Այն էլ ո՞չ միանգամից, վրա բերեց զինուորը։

Անտանելի դրութիւն էր. ամենքի ձեռքերը թուլացան։ Լուռ, խորին կարեկցութեամբ կանգնած էին բոլորեքեանք։ Ստիպվեցան յետ քաշվել։ Անդադար տարածվող հրդեհը լափում էր չորս կողմը։ Ներքին և վերին յարկերը բոլորովին արդէն կրակ էին ընկել։ Կարծում էին, թէ ահա մի րոպէ ևս, առաստաղը և յատակը կը քանդվեն։ Երեխաներին փրկելու յոյս չը մնաց։

Գովէնը պատահմամբ նայեց գաղտնի անցքի բաց դռան և ասաց.

—Լանտենակը նրանց սպանեց, իսկ իրան ազատեց։ Հեռացա՛ւ...

—Էլի յետ դարձաւ, ասաց մի ձայն։

Քրոջ որդին իր առջև տեսաւ իր մօրեղբօր ալևոր գլուխը։

Զինուորները յետ քաշվեցին։ Մարկիզը, մի մեծ բանալի ձեռքին, սենեակով անցաւ՝ ուղղակի դէպի երկաթէ դուռը։ Դուռը բացվեց։ Սենեակից դուրս խփեցին ծխախառն կրակի լեզուները։ Մարկիզը կանգ չառաւ. նա անհետացաւ ծխի մէջ։ Նոյն րոպէին յատակի մի մասը քանդվեց նրա ետևից։ Սպանվեց նա՝ թէ ոչ,—որոշել անկարելի էր։ Գո-

վէնը և իր մարդիկ հազիւ կարողացան ազատվել։ Նրանք այլ ևս ոչ մի օգնութիւն չէին կարող անել։

Երեխաների մայրը շարունակում էր հեկեկալ յուսահատված։ Երեխաները կանգնած էին միջին լուսամուտում, որին կրակը դեռ չէր հասել։ Զը հասկանալով որ իրանց վտանգ է սպառնում, նրանք սկզբում բոլորովին չէին վախենում։ Սենեակի պայծառ լոյսը և լուսամուտի տակի աղմուկը զուարճացնում էին նրանց։ Մայրը կանչում էր. նրանց անուններն էր տալիս. մեծը ճանաչեց նրա ձայնը և կանչեց.—Մայրիկ...

Միւս երկուսը սկսեցին կրկնել նրա յետևից.—Մայրիկ, մայրիկ...

Մարիամը պատնէշի վրայից արդէն իջնել էր և կանգնած էր զինուորների մէջ. աղաչում էր օգնել։ Բայց ինչ կարող էին անել զինուորները։

Բադուբը փորձեց կրկին բարձրանալ պատով։ Բայց պատը բոլորովին հարթ էր. ոչ մի տեղից չէր կարելի բռնել, և նա դեռ չը բարձրացած, ներքև գլորվեց։ Երեխաների մայրը ընկաւ ծունկների վրա, աղաղակելով.—Ազատեցէք։ Բայց ինչ կարելի էր անել։ Բերդի ներսը այրվում էր և փլվում։ Այն սենեակում, ուր գտնվում էին երեխաները, գրքերի ահագին պահարանները այրվում էին, ինչպէս փայտը վառարանի մէջ։ Երեխաները զարհուրած կանչում էին.—Մայրիկ, Մայրիկ։

Յանկարծ լուսամուտներից մէկում երևաց մի բարձր ստուեր։ Ամենքն աչքերը յառեցին

նրա վրա։ Մի քանիսը ճանաչեցին, որ դա մարկիզ Լանտենակն է։

Նա անհետացաւ, յետոյ իսկոյն, կրկին երևաց և սկսեց լուսամուտից ցածացնել մի երկար, ծալովի սանդուղք։ Դա պահվում էր այդ սենեակում, որ վտանգ պատահած ժամանակ՝ գործ դնեն։ Ներքևում զինուորները բռնեցին սանդուղքի միւս ծայրը և ամրացրին գետնի վրա։ Բադուբը ամենքի առաջ ընկած և յետևից էլ մի քանի տասնեակ մարդիկ բարձրացան սանդուխքով և կանգնեցին սանդուղքի աստիճանների վրա։ Մարկիզը վերցրեց առաջին պատահած երեխային և տուեց Բադուբին։ Այդ միջնակ երեխան էր։ Նա բղաւեց որքան ոյժումը կար.—Վայ, վախենում եմ։ Ձեռքից ձեռք տալով, զինուորները նրան վայր բերեցին։

Մեծն աւելի շատ վախեցաւ և չէր կամենում, որ Լանտենակը իրան վերցնէ. նա մինչև անգամ խփեց Բադուբին, երբ մարկիզը տուեց նրան։ Մնացել էր ամենից փոքրը, Ժորժետան։ Մարկիզը վերցրեց նրան. մանուկը ժպտում էր նրա երեսին։ Այդ երկաթէ մարդու աչքերից գլորվեցան արտասուքի կաթիլները։ Նա հարցրեց.—Ի՞նչ է քո անունը։

—Օրժետա, թոթովեց մանուկը։

Մարկիզը համբուրեց նրան և տուեց Բադուբին։

Մայրը կանգնած էր ներքև սանդուղքի մօտ, և չէր հաւատում իր աչքերին։ Առաջ նա խելքը

կորցրել էր վաշտից, հիմա էլ՝ ուրախութիւնից Պինդ գրկելով իր երեխաներին, համբոյրներով կարկուտ թափելով նրանց դէմքերին, նա լաց եղաւ, բարձրաձայն ծիծաղեց, յետոյ ուշաթափվեց։

—Ամենքը ազատված են, գոչեցին զինուորները։

Ամենքը, բացի Լանտենակից։ Բայց նրա համար ոչ ոք չէր հոգում։

Նա՝ մտածմունքի մէջ ընկած՝ կանգնեց լուսամուտի մօտ, կարծես ինքն էլ չէր իմանում, թէ ինչ անի։ Յետոյ կամաց կամաց դուրս եկաւ լուսամուտից և սկսեց ցած գնալ սանդուղքով՝ հպարտ և հանդարտ կերպով։ Զինուորները նրա վրա նայում էին զարմացած, համարեա թէ երկիւղով և չէին հաւատում իրանց աչքերին։ Երբ նա արդէն իջել էր, Սիմուրդէնը ինքը մօտեցաւ նրան, ձեռքը դրեց նրա ուսին և ասաց.—Դու բռնուած ես։

—Գիտեմ, պատասխանեց Լանտենակը։

Զինուորները տարան բանտարկեցին նրան։

VIII

ԽՂՃՄՑԱՆՔ

—Վաղը մենք զինուորական դատարանով կը դատենք նրան, ասաց Սիմուրդէնը, մօտենալով Գովէնին. Բայց դու չես մասնակցիլ, Դու նրան արիւնակից ես. նրան պատժելը քո գործը չէ։ Երկար չի քաշիլ. վաղը կը լինի դատավճիռը,

միւս օրը՝ գլխատումը։ Հիմա կարելի է ասել, որ ապստամբութիւնը ճնշված է։

Գովէնը ոչինչ չը պատասխանեց և գնաց իր վրանը։ Նա այլ ևս չէր հետաքրքրվում հրդեհով. զինուորները մենակ հանգցրին։ Բադուբը փայփայում էր երեխաներին։ Սիմուրդէնը միւս օրվայ համար մի քանի կարգադրութիւններ արեց։ Բանակում սկսեց տիրել հանգստութիւն։

Գովէնը ընկաւ զանազան մտածմունքների մէջ։ Նրա առջև հէնց այդ ժամին կատարվեց մի անսպասելի անցք, և նա չէր իմանում՝ ինչպէս վարվի։ Մինչև այդ ժամանակ նա բոլորովին չէր տատանվում։ Նա իր առջև տեսնում էր պատերազմ։ Մի կողմը, իրանցը, նա արդար էր համարում, միւսը—անարդար։ Մի կողմում նրա բարեկամներն էին, միւս կողմում—թշնամիները։ Բարեկամներին նա բարիք էր ցանկանում, թշնամիներին—չարիք։ Մի բոլորովին պարզ և հասկանալի բան։ Ի՞նչ կայ այդտեղ տատանվելու... Հիմա գլխաւոր թշնամիներից մէկը ընկել է իրանց ձեռքը. պէտք էր ուրախանալ դրանով։ Բայց Գովէնը չը կարողացաւ ուրախանալ։ Ինչո՞ւ։ Որովհետև թշնամու վարմունքը սաստիկ ազդեց նրա վրա։

Երեք փոքրիկ, անմեղ երեխաներ ոչնչանում էին։ Պատերազմը այդպիսիներին չի ջոկում։ Արիւնածարաւ, եղբայրասպան պատերազմը կլանում է ամենը, ինչ որ պատահում է իր ճանապարհին։ Պատերազմի ճանապարհին պատահեցին

երեխաներ։ Ոչնչացնել երանց՝ պատերազմի համար ոչինչ բան է։ Մարկիզ Լանտենակը իր դէմ ունէր մի ամբողջ գունդ. այդ գունդը հետամուտ էր լինում նրան, ինչպէս գազանի։ Հեռքը գըտնելով, թակարդ լարեց։ Նա համարեա թէ հրաշքով ազատվեց, փախաւ անտառը։ Անտառում նա ազատ էր։ Առիւծը փախաւ վանդակից։ Հեռացաւ։ Եւ յանկարծ ինքը, իր կամքով, յետ դարձաւ։ Ուղղակի անձնատուր եղաւ Թշնամուն։ Ինչո՞ւ։ Միայն նրա համար, որ ազատի երեք փոքրիկ երեխաներին։ Այդ երեխաները նրան ազգական չէին. ո՛չ։ Բոլորովին օտար։ Նա խըղճաց նրանց։ Նա թողեց անտառը և ազատութիւնը, ժտաւ հրդեհի մէջ, ազատեց նրանց, իսկ իրան զոհեց։ Իր կեանքը զոհեց նրանց համար։ Իսկ հիմա նրան մահ է սպասում։ Արդարութիւն է այս...։ Արդարութիւն է, որ մարդը պատժվի վսեմ, բարի, ազնիւ գործի համար։

Գովէնը չէր կարողանում հաշտվել այն մտքի հետ, որ Լանտենակը կը պատժվի հէնց այն ժամանակ, երբ պէտք էր նրա առաջ խոնարհվել։ Ազատել նրան. ազատել Թշնամուն... Բայց այն ժամանակ ապստամբութիւնը էլի կը նորոգվի...

Գովէնը մտաբերեց բոլորը, ինչ որ պատահել էր։ Նա չը գիտէր, թէ ինչպէս վարվի, ինչ անի...

IX

ԴԱՏԱՍՏԱՆ

Միւս օրը առաւօտեան կազմվեց զինուորական դատարանը։ Դատաւորները երեք հոգի էին։ Սիմուրդէնը, որ նախագահում էր, մի կապիտան, և ունտեր-օֆիցեր Բադուբը։ Կապիտանը նստած էր Սիմուրդէնի աջ կողքին, իսկ Բադուբը—ձախ։ Մնացած օֆիցերները և բոլոր զինուորները ներկայ էին։ Երկու պահապանի հրամայված էր բերել կալանաւորին։ Նրանք գնացին և մի բոպէից յետոյ վերադարձան. նրանց հետ եկողը Գովէնն էր։ Սիմուրդէնը շուարած ասաց.

—Ես ուղարկել եմ կալանաւորի յետևից։

—Կալանաւորը՝ ես եմ, ասաց Գովէնը։

—Դո՛ւ։

—Ես։

—Իսկ ո՞րտեղ է Լանտենակը։

—Ազատ է։

—Ի՞նչպէս թէ ազատ է։

—Ազատ է։

—Նա փախել է։

—Փախել է։

Սիմուրդէնը քաշ դցեց գլուխը։ Յետոյ կրկին բարձրանալով, խոժոռած դէմքով հարցրեց.

—Նրան օգնել ե՞ն։

—Այո՛, ասաց Գովէնը։

—Ո՞վ է օգնել։

—Ես։

—Խելագարվե՞լ ես, ի՞նչ է։

—Ես նրան բաց թողեցի։

—Ի՞նչպէս, ի՞նչ։

—Գիշերը ես գնացի նրա մօտ. պահապանը, ի հարկէ, ներս թողեց, Ես տուեցի նրան վերնա-

զգեստը։ Նա հագաւ և իմ փոխարէն դուրս եկաւ։

—Անկարելի է։ Բերէք Լանտենակին,

—Լանտենակը չը կայ։ Զինուորները նրան ինձ տեղ են ընդունել և թոյլ են տուել, որ հեռանայ։ Մութ է եղել, չեն ճանաչել։

—Կրկնում եմ՝ դու խելագարվել ես։

—Ես պատմում եմ այն, ինչ որ եղել է։

Սիմուրդէնը գունատված՝ արտասանեց.

—Դրա համար քեզ...

—Կը գլխատեն, վրա բերեց Գովէնը։

Սիմուրդէնը լռեց։ Գովէնը նրա համար ամենաթանգագին մարդն էր։ Կարող էր նա երբ և իցէ մտածել՝ դատելու իր որդեզրին։ Մի բոպէ անցնելուց յետոյ, զսպելով իր յուզմունքը, նա ասաց հաստատուն ձայնով.—Դրա համար քեզ պէտք է դատի ենթարկել։ Նստիր։

Գովէնը նստեց այն նստարանի վրա, որը դրված էր Լանտենակի համար։

—Պահապան, հանիր սուրդ։ Հրամանը կատարվեց։

Սիմուրդէնը փոխեց իր հայրական ձայնը։ Նա ասաց բարկացած ձայնով.—Մեղապարտ, վեր կացէք։

Գովէնը վեր կացաւ։ Սիմուրդէնը սկսեց հարցմունքը, բոլոր ձևապաշտութիւնները պահպանելով.

—Ձեր անունը։

—Գովէն։

—Ձեր կոչումը։

—Վաշտի հրամանատար։

—Դուք ազգակցն էք փախստականին։

—Ես նրա քրոջ որդին եմ։

—Ձեզ յայտնի՞ է, թէ ինչ պատիժ պէտք է ստանար նա։

—Յայտնի է։ Դատավճռի տակ եղել է իմ ստորագրութիւնը։

—Ձեզ համար պաշտպան ընտրեցէք։

—Ես ինքս կը պաշտպանեմ ինձ։

—Կարող էք սկսել։

Գովէնը սկսեց մտածել, կարծէք խօսք էր փնտրում։ Սիմուրդէնը կրկնեց.—Ասացէք, ինչ որ ունիք ձեզ պաշտպանելու համար։

Գլուխը բարձրացրած, բայց քաշ գցած աչքերով, առանց ոչ ոքի վրա նայելու, Գովէնը սկսեց խօսել.

—Մի դէպքը ժոռացնել տուեց միւսին։ Ես տեսայ իմ առաջ մի մարդ, որ բարի գործ կատարեց. ես ժոռացայ այդ միևնոյն մարդու հաբիւրաւոր չար գործերը։ Նա ազատեց երեխաներին, և ես չէի կարող նրան չազատել։ Նրա առաջվայ արարքները ես ժոռացայ և ազատութիւն տուեցի նրան։—Եթէ ես մեղաւոր եմ, պատժեցէք ինձ։

Նա կանգ առաւ։ Սիմուրդէնը հարցրեց.

—Ոչինչ չունէ՞ք աւելացնելու։

—Ոչինչ։

—Նստեցէք։

Յետոյ կարդացվեցան օրէնքի այն կէտերը,

որոնցով մահուան պատժի են ենթարկվում նը-
րանք, որոնք մանակից են լինում նշանաւոր
յանցաւորների փախչելուն։

Սիմուրդէնը ասաց.—Մեղապարտ, ուշադրու-
թեամբ լսեցէք։ Մենք դատաւորներս հիմա կը
քննենք՝ արդեօք մեղաւոր էք, թէ ոչ։ Մեզանից
ամեն մէկը բարձրաձայն կը յայտնի իր կարծիքը։
Վերջնական դատավճիռը կը կայացնվի ձայների
բազմութեամբ։ Կապիտան, սկսեցէք։

Կապիտանը անշարժ, կարծես քարացած,
սկսեց խօսել.

—Օրէնքը պարզ է։ Օրէնքը խախտել չի
կարելի։—Հին Հռոմում Մանլիոսը հրամայեց գել-
խատել իր որդուն նրա համար, որ նա յաղթել
էր թշնամուն, չը սպասելով հօր հրամաններին։
Այնտեղ եղել է միայն դիսցիպլինի—կարգապա-
հութեան խախտում, իսկ այստեղ՝ օրէնքի խախ-
տում։ Հպատակվելով կարեկցութեան զգացմուն-
քին, այս մարդը վնաս է տուել իր հայրենիքին։
Այդպիսի դէպքում կարեկցութիւնը յանցանք է։
Հրամանատար Գօվէնը օգնել է ապստամբ Լան-
տենակի փախչելուն։ Գօվէնը մեղաւոր է։ Իմ
կարծիքով նրան պէտք է մահուան դատա-
պարտել։

—Արձանագրել, հրամայեց Սիմուրդէնը։

Արձանագրեցին. «Առաջին կարծիք՝ մահուան
պատժի ենթարկել»։

Սիմուրդէնը դարձաւ Բադուբին.—Այժմ ձեր
հերթն է։

Բադուբը վեր կացաւ, դարձաւ դէպի Գօվէնը,
գլուխ տուեց նրան, և սկսեց իր խրոխտ ձայնով.

—Ուրեմն ինձ էլ պէտք է գլխատել։ Երդվում
եմ պատուով և խղճով. որ ես էլ կը ցանկանա-
յի, սրտանց կը ցանկանայի անել նախ՝ այն, ինչ
որ արել է մարկիզը, և երկրորդը՝ այն, ինչ որ
արել է Գօվէնը։ Հէնց որ ես տեսայ ծերունի
Լանտենակը հրդեհի մէջ մտաւ երեք երեխանե-
րին ազատելու համար, ես իսկոյն մտքումս ասա-
ցի. «Նա լաւ մարդ է»։ Իմ հրամանատարը ա-
զատել է ծերունուն։ Դա մի այնպիսի գործ է,
որ եթէ ինձանից լինէր կախված, ես այս բոպէ-
ին իմ հրամանատարին և աստիճան, և շքանշան
կը տայի։ Ասում են, որ նրան պէտք է մահուան
պատժի ենթարկել։ Բայց այն ժամանակ նա կը
մեռնի։ Իսկ հարկաւոր է, որ նա ապրի, որովհե-
տև նա օգտակար է ամենքի համար։ Պատժել
նրա համար, որ նա ծերունուն ազատել է։ Չէ՞
որ ծերունին ազատեց երեխաներին։ Երկուսն էլ
լաւ են արել։ Եւ ինչի՞ նման կը լինի, եթէ բարի
գործի համար պատժենք մարդոց։ Միթէ լաւ կը
լինէր, եթէ երեխաները այրվէին։ Ինչու մարդիկ
միմեանց մոս ուտեն։ Չէ՞ որ այդ գաղանութիւն
է։ Մենք մեր հրամանատարին սիրում ենք։ Առաջ
էլ ենք եղել սիրում, հիմա էլ ենք սիրում։ Ցի-
մարութիւն է ասել՝ թէ նրան հարկաւոր է սպա-
նել։ Ինչո՞ւ։ Անկարելի է։

Բադուբը նստեց վրդովված։ Սիմուրդէնը
դարձաւ նրան.

—Կը նշանակէ դուք արդարացնում էք Գովէնին։

—Իմ կարծիքով մեր հրամանատարին պէտք է բարձր աստիճան տալ. նրան գենեռալ պէտք է շինել։

—Ուրեմն դուք արդարացնում էք նրան։ Այո, թէ ոչ։

—Եթէ կամենում են անպատճառ մէկի գլուխը կտրել, այն ժամանակ աւելի լաւ է թող իմս կտրեն։ Ես համաձայն եմ։

—Արդարացնում է, ասաց Սիմուրդէնը.— Արձանագրեցէք։

Արձանագրեցին. «Երկրորդ կարծիք՝ արդարացնել»։

Մի ձայն մահուան պատժի կողմն է, միւսը՝ արդարացնելու։ Ձայները բաժանվել են։

Հերթը հասաւ Սիմուրդէնին։ Նա կանգնեց։ Նա սփրթնել, զարհուրելի, մեռելային գոյն էր ստացել։ Նա խօսում էր ծանր կերպով։ Բայց հայեացքը համարձակ էր։

—Յանցաւոր, դարձաւ Սիմուրդէնը դէպի Գովէնը։ Ձեր յանցանքի հարցը քննված է երկու կողմից։ Մի ձայնի առաւելութեամբ..

Նա կանգ առաւ։ Ամենքը սպասում էին։ Ո՞ր խօսքի համար էր տատանվում։ Կեանքի՞, թէ մահուան։ Վերջապէս նա ասաց.

—Դատապարտվում է մահուան։

—Յետոյ աւելացրեց.—Պատիժը վաղ առաւօտեան, երբ արեգակը դուրս կը գալ։

—Գովէնը վեր կացաւ և գլուխ տուեց։

—Հիմա դրան դուրս տարէք, ասաց Սիմուրդէնը։

Գովէնին մերկացրած սրերով դուրս տարան։

X

ԴԱՏԱՊԱՐՏՈՒԱԾԸ

Բանակը յուզված էր, դժգոհ լինելով, որ Գովէնին մահուան դատապարտեցին։ Սիմուրդէնին չափազանց անգութ էին համարում։ Կամենում էին, որնա դատավճիռը փոխի։ Բայց նա իր խօսքին հաստատ մնաց։ Հրամայեց գլխատման տեղը պատրաստել։

Հասաւ գիշերը։ Սիմուրդէնը չը կարողացաւ քնել և գնաց դատապարտվածի մօտ։ Գովէնը նրան դիմաւորեց անկեղծ ուրախութեամբ, և մէկ-մէկ յիշեց այն ամենը, ինչով որ պարտական էր նրան։

—Դու ինձ դաստիարակել ես, դու ինչ զարգացրել ես. քեզանից սովորեցի սիրել ճշմարտութիւնը։ Առանց քեզ մի՞թէ ես կարող էի մարդ դառնալ...

Նրանց մէջ սկսվեց իրանց սիրած խօսակցութիւններից մէկը։ Նրանք խօսում էին այն մասին, թէ արդեօք կը գա՞յ մի այնպիսի ժամանակ, երբ մարդիկ միմեանց հետ կը եղբայրանան, երբ կը դադարեն պատերազմները և սովը, երբ ամեն չարութիւն կանհետանայ։ Գովէնը յոյս ունէր, որ ժամանակով աշխարհի վրա ամեն բան դէպի աւելի լաւը կերթայ։ Սիմուրդէնը կասկածում էր և ցնորք էր համարում երիտասարդի ասածները։ Վաղվայ համար նրանք ամենևին չէին խօսում, կարծես մո-

ռացել էին վաղվայ օրը։ Նրանք կամենում էին թափանցել հեռու ապագան և նախատեսնել. թէ ինչ կը լինի շատ տարիներ անցնելուց յետոյ...

— Հիմա մենք ապրում ենք փոթորիկների մէջ, ասում էր Գովէնը։— Բայց փոթորիկները խոյս տուեան չեն շարունակվիլ։ Փոթորիկից յետոյ խաղաղութիւն կը տիրի և ամեն ինչ կը ծաղկի՝ կրկնապատիկ, աւելի յաւ։ Բնութեան մէջ միշտ այդպէս է լինում։ Մէկը մեռնում է, միւսը ծնվում է՝ աւելի թարմ, աւելի զօրեղ։

Նա խորասուզվեց մտածմունքի մէջ։ Ոչ Գովէնը, ոչ էլ Սիմուրդէնը չը նկատեցին, թէ ինչպէս մի քանի ժամ միմեանց վրա՝ խօսում էին։ Առաւօտը մօտենում էր։ Սկսեց լուսանալ։ Դրսից լսվում էին կացնի հարուածներ։ Գլխատման տեղը համարեա պատրաստ էր։ Սիմուրդէնը ցնցվեց և գլուխը բարձրացրեց։ Գովէնը մտածում էր ուրիշ բանի վրա և չը նկատեց նրա վրդովմունքը։ Սիմուրդէնը վեր կացաւ յարդէ ներքնակից, որի վրա երկուսն էլ նստել էին։ Գովէնն այդ էլ չը նկատեց։ Սիմուրդէնը կամաց կամաց դուրս եկաւ։ Նրա սիրտը կարտվում էր. հոգին տանջվում... Գովէնի կորուստը նրա համար ամենասարսափելի անբախտութիւն էր։

Իզուր էին բանակում խօսում, թէ Սիմուրդէնը երկի վերջին բոպէին կը ների Գովէնին։ Նա չը ներեց։ Առաւօտեան Գովէնը գլխատվեց։ Բայց հէնց այն բոպէին, երբ նրա վզին վրա բերին կացինը, լսվեց և մի ուրիշ ձայն՝ ատրճանակի տրաքոց։

Սիմուրդէնը ինքնասպանութիւն գործեց։

Լ. ՀԱՆԻՆԻ ... Ա. ... 7/XI. ... ԱՆՎԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Ա. ԱՎԱՔԵԱՆԻ.

	ԳԻՆՆ Է Կ.
1. Խօլեր	5
2. Խրիմեան Հայրիկ	20
3. Պանդուխտ պատանի (սպառուած)	70
4. Պետրոս Դուրեանի բանաստեղծութիւնները	20
5. Աստուած գիտէ արդարն ու մեղաւորը, բայց դատաստանը շուտով չի անում Լ. Տոլստոյի	5
6. Երեք մահ Լ. Տոլստոյի	5
7. Ճշմարտութիւն	5
8. Ջամախու աղէտը	20
9. Պետրոս Դուրեանի բանաստեղծութիւնները II տպագր.	20
10. Պատկերներ Բաֆֆու կեանքից	40
11. Երգիծաբանական հատուածներ Յ. Պարոնեանի	5
12. Որտեղ կայ սէր, այնտեղ է և Աստուած Լ. Տոլստոյի	5
3. Եղբայր եղբօր դէմ Վ. Հիւգոի	10
14. Հարսնացու և փեսացու	10

Որոնք կը պահանջեն մէկ մէկ օրինակ ճանապարհածախսը ուղարկողի վերայ. իսկ գումարով ցանկացողներին 25 դէպ ճանապարհածախսով. մեր հասցէն.

Тифлисъ. улица Броссе № 23. А. А. Ованесянцъ.

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0315359

6